

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2014 թվականի դեկտեմբերի 21-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2015 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասերի նախապատրաստական աշխատանքների մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին – Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2015 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասերի նախապատրաստական աշխատանքների հարցը /զեկուցող՝ Ն. Ա. Կուտուզյան/:

Նշվեց, որ Գավառի պետական համալսարանի Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2015թ. 1-ին կիսամյակի դասերը բոլոր մասնագիտությունների չորրորդ և հինգերորդ կուրսերում սկսվելու են 2015թ. հունվարի 8-ին, ավարտվելու են 2015թ. հունվարի 25-ին, ստուգաքնների հանձնումը կկազմակերպվի հունվարի 28, 29, 30-ին, քննությունների հանձնումը՝ փետրվարի 4, 5, 6, 7, 8-ին, բաց դռների օր՝ փետրվարի 14-ը, չորրորդ կուրսերի ուսանողների համար՝ առաջին լուծարային շրջանը՝ փետրվարի 12-ից մինչև փետրվարի 28-ը՝ ներառյալ, երկրորդ լուծարային շրջանը՝ մարտի 4-ից մինչև մարտի 15-ը՝ ներառյալ, ավարտական 5-րդ կուրսերի ուսանողների համար՝ լուծարային շրջանը՝ փետրվարի 12-ից մինչև փետրվարի 28-ը՝ ներառյալ: Նոր տարվա բոլոր մասնագիտությունների առաջին, երկրորդ և երրորդ կուրսերում դասերը սկսվելու են 2015թ. հունվարի 8-ին, ավարտվելու են 2015թ. հունվարի 30-ին, ստուգաքնների հանձնումը կկազմակերպվի փետրվարի 4-ից մինչև փետրվարի 15-ը, քննությունների հանձնումը՝ փետրվարի 18-ից մինչև մարտի 7-ը, բաց դռների օր՝ մարտի 13-ը և մարտի 14-ը, առաջին լուծարային շրջանը՝ մարտի 18-ից մինչև մարտի 29-ը՝ ներառյալ, երկրորդ լուծարային շրջանը՝ ապրիլի 1-ից մինչև ապրիլի 12-ը՝ ներառյալ:

Արտահայտվեցին – Ա. Ե. Համբարձումյանը, Վ. Դ. Խաչատրյանը, Մ. Հ. Հակոբյանը

Նշվեց, որ Գավառի պետական համալսարանի համացանցային կայքում տեղադրվել է դասացուցակը, հայտարարությունները:

Նշվեց նաև, որ ՀՀ պաշտպանության նախարարին և ոստիկանապետին ուղարկվել է գրություն՝ համապատասխան ստորաբաժանումների ուսանող աշխատակիցներին դասերին մասնակցության թույլտվության վերաբերյալ:

Որոշեցին – Գավառի պետական համալսարանի Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2015թ. 1-ին կիսամյակի դասերը կազմակերպվեն հինգօրյա ռեժիմով, բացի երկուշաբթի և երեքշաբթի օրերից: Համալսարանում գործող կանոնակարգի համաձայն՝ միջանկյալ քննություններին մասնակցելու իրավունք վերապահել միայն ընթացիկ տարվա առաջին կիսամյակի ուսման վարձը վճարած ուսանողներին:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Վ. Դ. Խաչատրյան